

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

Կ Ա Ր Գ

Սույն կարգով սահմանվում են մագիստրատուրայի ընդունելության պայմանները

1. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը, մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումներ ու նոր հնարավորություններ ընկալելու, ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան և դիպլոմ ստանալու համար:
2. ՀԱԱՀ-ի ռեկտորատը զանգվածային լրատվության միջոցներով հայտարարություն է տալիս մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների, ուսուցման ձևի և տեղերի վերաբերյալ:
3. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար, ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են պրոռեկտորները, մագիստրատուրայի բաժնի վարիչը, ինչպես նաև ֆակուլտետների ղեկանները:
4. Ընդունող հանձնաժողովը, հաշվի առնելով ֆակուլտետի գիտական խորհրդի կարծիքը ուսումնասիրում և քննարկում է վերջինիս կողմից ներկայացրած մրցույթի հավակնորդների ցուցակները և ըստ մասնագիտությունների, բազային կրթության ծրագրով ուսումնասիրած դասընթացների ցանկի հիման վրա իրականացնում է մրցույթ:
5. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ

քաղաքացիները: Այլ բուհերից կամ նույն բուհի հարակից մասնագիտությունների շրջանավարտները կարող են դիմել եթե ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը 60%-ից ցածր չէ:

- Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

-Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

6. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ռեկտորի անունով՝ կցելով համապատասխան փաստաթղթերը՝

-բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

-ինքնակենսագրություն և 4 լուսանկար (3 X 4 չափի),

-հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

-ստացած մրցանակների, վկայականների, դիպլոմների պատճենները:

7. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է 2 փուլերով:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), պարտադիր գինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը, որին կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը, ըստ կրթության պետական կառավարման

լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի:

Հեռակա ուսուցման մասնագիտություններում մագիստրատուրայի դիմորդների փաստաթղթերի ընդունելությունը իրականացվում է տվյալ տարվա հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ը, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված մասնագիտությունների և ուսուցման տեղերի:

8. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

- նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով, կամ միջին որակական գնահատականով,
- մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով, կամ միջին որակական գնահատականով,
- տպագրված, կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,
- ուսումնառության ընթացքում ստացած դիպլոմների, մրցանակների առկայությամբ,
- հասարարական աշխատանքների մասնակցությամբ:

9. Մրցույթով անցած մագիստրանտների հետ կնքվում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդներին: